



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

28.08.2023թ.

Վայոց ձորի մարզպետ
Պարոն Արարատ Գրիգորյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից

Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanjan@hetq.am

Հարգելի պարոն Գրիգորյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն

1. Մարզպետարանի ենթակայության քանի՞ դպրոց է գործում:
2. Նշված դպրոցներում հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ մանկավարժի քանի՞ թափուր հաստիք կա, ո՞ր դպրոցներում, երբվանի՞ց է թափուր հաստիքն առաջացել և ո՞ր առարկաների գծով: **Տեղեկատվությունը տրամադրել ըստ առարկաների՝ նշելով թափուր հաստիքի առաջացման ժամանակը, դպրոցը և դպրոցական առարկան:**
3. Ինչպե՞ս են լրացվել այդ թափուր հաստիքների դասաժամերը, ի՞նչ եղանակով և որքան՞ով է այն եղել արդյունավետ:
4. Որո՞նք են մանկավարժի թափուր հաստիքների առաջացման հիմնական պատճառները:
5. 2023-2024թթ. ուսումնական տարում կա՞ն դպրոցներ որտեղ առաջին դասատանի աշակերտ չունեն: **Եթե այո՝ տրամադրել այդ դպրոցների ցանկը և առաջին դասարանցի չունենալու հիմնական պատճառները:**
6. 2023-2024թթ. ուսումնական տարում կա՞ն դպրոցներ որտեղ առաջին դասատանի 1 աշակերտ են ունենալու: **Եթե այո՝ տրամադրել այդ դպրոցների ցանկը:**

Կանխավ շնորհակալություն

Գ. Բալասանյան

